Ցոյների մասնակցությունը պատերազմության հետևանք է. գինուոր պիտի տան, և ահա միջոցը ազատելու դրանից՝ ազատել հայերի տիրապետությունից:

Օտարները չեն յուժարում հրաժարել տիրապետող և արտօնեալ դառնալու մարմաջից: Նրանք ցանկություն ունեն ապրելու այստեղ անաչխատ, հայրենիքի պաշտպանության գործին անմասն, և միայն հայն է, որ պիտի տառապի, պիտի տքնի ու արիւն թափէ՝ հայրենիքը և հայրենիքի մէջ այդ օտարների կեանքը պաշտպանելու համար. նրանց մտքից դեռ չեն գնացել մորթու տարբերությունները, հայը նրանց աչքում հպատակ լինելու արժանի մի ժողովուրդ է: Եթէ սա դեմոկրատական հանրապետություն է, ապա պիտի դեմոսը պաշտպանէ այս երկիրը. եթէ ապրում են այստեղ, ապա պիտի մասնակցեն տառապանքին ու երկրի պաշտպանության գործին: Իսկ եթէ կան ժողովուրդներ, որոնք մեր տառապանքն ու մեր կռիւը համարում են անխորհուրդ, եթէ կան այնպիսիք, որ դեռ չեն հաշտուում Հայաստանի անկախության հետ, ապա ճանապարհը բաց է, կարող են գնալ (աղմկալից, բուռն ծափեր): Պէտք է յայտարարել այդ անհրաժեշտօրէն, որովհետև նման մտայնությամբ ու վերաբերմունքով նրանք թշնամի են մեր թիկունքում: Հայ ժողովրդի դերադոյն դժբախտությունն այն է, որ նա ունեցել է բազմաթիւ ճակատներ. այսօր նրա դերադոյն խնդիրն է ունենալ մի ճակատ: Թիկունքում թշնամի ունենալու պատճառով է, որ մենք թողինք Երզնկան, թողինք Կարինը, Ալեքսանդրապոլը:

Մենք կուում ենք, կը կուենք էլի տասը տարի, բայց մեր թիկունքում զարկող չպիտի լինի. և թող իմանան, որ մենք անողոք կերպով կը ջախջախենք այն բոլոր տարրերին, որոնք այսուհետև կը փորձեն թիկունքից զարկել մեզ (որոտընդոստ ծափեր, խանդավառ ցոյցեր):

Մեծամասնական խաչագողության ոչնչացումը այս հողեբանության արդիւնքն էր, ուստի, ով կը լսի իմ խօսքերը, թող չզարմանայ: Ամենից աւելի մենք դիտենք մեր ժողովրդի տառապանքները: Ամենից աւելի մենք ենք լսել նրա հեծեծանքը, մեռնողների վերջին հառաչը, հաղարաւոր այրիների ու որբերի աղիողորմ կանչը. այդ մենք դիտենք, տեսել ենք ու լսել, բայց պէտք է պարզ լինի մեզ համար մի տեսակէտ. արդեօք, Եսաւի նման մենք պէտք է ծախե՞նք մեր անդրանիկությունը ոսպի ապուրով: Կան խիստ իմաստուններ՝ իբրենց քաղաքագէտ համարող մարդիկ, որոնք կարծում են, թէ ազատությունը ծախել իմաստություն է կուշտ փորի գնով: Պարզ պիտի լինի մեզ համար, թէ արժէ՞ որ դատապարտենք այսքան, պէտք է, որ մեր դաւակները մահանան քաղցից ու հանդիստ դանեն ռազմի դաշտում: Ժողովուրդը արդէն պատասխանեց այդ հարցերին, այժմ հերթը հասել է մտաւորականության, ու չեմ կասկածում, նա ևս պիտի ասէ թէ դերադասում է լինել մերկ, լինել քաղցած, բայց ազատ ու անկախ (երկարատև, խանդավառ ծափեր):

Ազգերի ազատությունը գաղափարը բուրժուական հասկացողություն չէ, ինչպէս շաղակրատում են մի քանի իմաստակներ. ազգերի ազատությունը կը նշանակէ աշխատանքի ազատություն: Երբ մենք հպատակ էինք, մեր աշխատանքն էր հպատակ, ուստի ամէն մէկ ռամկավար պէտք է հասկանայ, որ հայ ժողովրդին ազատելով ռուսական լծից՝ ազատած կը լինենք հայ ժողովրդի աշխատանքը ռուս ժողովրդի շահագործումից: Իսկ երբ մենք պաշտպանում ենք մեր ազատությունը Ռուսաստանի դէմ, կուզէ այն լինի բոլշևիկեան, ցարական, թէ ռամկավարական, կը նշանակէ պաշտպանում ենք հայ ժողովրդի աշխատանքի ազատությունը: